«Ծագեսցի յաւուրս նորա արդարութիւն, բազում խաղաղութիւն մինչև կատարեսցի լուսին», ինձ կը թուի թէ հանդուցեալ Աղէքսանդր Կայսրն էլ իւր վերջին օրերում նոյն Սաղմոս կարդաց, «Աստուած զիրաւունս քո արքայի տուր և զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի»։ քան զայս աւելի ինչ մեծ աղօթք կարող ենք անել Նորապսակ ՆԻԿՈԼԱՅ ԿԱՅՍԵՐ համար։

Թող Աստուած Նրան իմաստութիւն և զօրութիւն տայ, որ արդարութեամբ դատի իւր ժողովուրդը, արդարութեամբ ճշմարտութեամբ և ուղղութեամբ բարձրանայ Մեծին Ռուսիոյ Թագաւորութեան Գահ։

Կեցցէ՛ ուրեմն ՆԻԿՈԼԱՅ ԿԱՅՍՐ համայն Ռուսիոյ։

Երևանի զօրախմբի զնդապետը, որը նոյնպէս ներկայ էր սեղանին, առաջարկեց մեր ժողովրդի զգացումների թարգման հանդիսացող ներկայ Հայոց Վեհափառ Կաթուղիկոսի կենացը։

Վեհափառ Հայրապետի թարգմանն էր ճեմարանի ուսուցիչ՝ պ. Յովհաննէս Յովհաննիսեանը։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԲԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1555 յանուն Ղևոնդ քահանայի Տէր Աստուածատրեան ի Բագու, որով շնորհէ նմա իրաւունս կրել խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Գերապատիւ Մեսրոպ Արքեպիսկոպոսի։ սեպտեմբերի 6։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1591 յանուն Սարգիս քահանայի Ոսկերչեան ի Նոր Նախիջևան, որով շնորհէ նմա իրաւունս կրել զգլխարկն թաւշեայ «կամիլաւկա» անուանեալ, ըստ խնդրանաց «Մարդասիրական ընկերութեան» քաղաքին։ սեպտեմբ. 12։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1616 յանուն Նիկողայոսի Թադէոսեան ի Շամախի, որով օրհնէ զնա և զամենայն գերդաստանն, սակս կառուցման նորա զկաթուղիկէն Ս. Սահմանոսի վանուցն Սաղիանու, ծախսեալ զգումարն վեց հարիւր յիսուն ռուբլեաց։ սեպտեմբ. 14։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1617 յանուն Բարդուղիմէոս քահանայի Բէգկիւլեան որ ի Ստավրօպոլ, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի գլուխ զթաւշեայ գլխարկն «կամիլաւկա» անուանեալ, ըստ խնդրանաց ժողովրդեանն։ սեպտեմբ. 15։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1618 յանուն Մինաս քահանայի Միրանեան ի Վլադիկաւկազ, որով շնորհէ նմա զպատիւաւոր քահանայութեան, ըստ խնդրանաց ժողովրդեան։ սեպտեմբ. 15։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1631 յանուն Ասքանազ Տէր Միմէոնեանի և Տիկնոջն, որով օրհնէ զսոսա ընդ բարենպատակ ձեռնարկութիւն իւրեանց՝ բանալ անձնական ծախիւք մի դասեան զպրոց ի Համամլի գեղջ և կարգելով զսոսա խնամակալս, թոյլատրէ բանալ զզպրոցն։ սեպտեմբ. 17։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1669 յանուն Եղնիկ քահանայի Երզնկեան, որով շնորհէ նման իրաւունս կրել ի գլուխ զթաւշեայ գլխարկն «կամիլաւկա» անուանեալ, ըստ միջնորդութեան Գերապատիւ Առաջնորդին Վրաստանի և Իմէրէթի Գէորգ եպիսկոպոսի Սուրէնեան։ սեպտեմբ. 27։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1670 յանուն Մեսրոպ քահանայի Մելեան, թեմական տեսչի Վրաստանի, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ։ սեպտեմբ. 27.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1671 յանուն Պետրոս քահանայի Կուսիկեան ի Վլադիկաւկազ, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի գլուխ զգլխարկն թաւշեայ «կամիլաւկա» անուանեալ, ըստ խնդրանաց ժողովրդեան քաղաքին։ սեպտեմբ. 27.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1672 յանուն Աշոտ քահանայի Թեմուրյաղեան ի Տփխիս, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Առաջնորդին Տփխեաց Գերապատիւ Գէորգ եպիսկոպոսի Սուրէնեան։ սեպտեմբ. 27.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1673 յանուն Գիւտ քահանայի Աղանեան ի Տփխիս, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի գլուխ զթաւշեայ զկխարկն «կամիլաւկա» անուանեալ, ըստ միջնորդութեան Գերապատիւ Առաջնորդին Տփխեաց։ սեպտեմբ. 27.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1674 յանուն Սահակ քահանայի Սահակեան ի Տփխիս, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ ըստ միջնորդութեան Գերապատիւ Առաջնորդին։ սեպտեմբ. 27.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1675 յանուն Աւետիս աւագ քահանայի Իսմայիլիա քաղաքի, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ խնդրանաց ժողովրդեանն։ 27 սեպտեմբ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1676 յանուն Յովհաննէս քահանայի Քաջաղնունի, գործակալին Ախալքալակայ, որով շնորհէ նմա զպատիւ աւագ քահանայութեան։ սեպտեմբ. 27.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1677 յանուն Սահակ քահանայի Խսխանեան Ցխինվալու, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ վկայութեան բարեգործական ընկերութեան տեղւոյն և ըստ միջնորդութեան Գերապատիւ Առաջնորդի Տփխեաց։ սեպտեմբ. 27.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1678 յանուն Գրիգոր քահանայի Շիրմազանեան ի Տփխիս, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Գերապատիւ Առաջնորդի Տրփխեաց։ սեպտեմբ. 27.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1679 յանուն Յովակիմ քահանայի Ստեփանոսեան ի Նոր Նախիջևան, որով շնորհէ նմա զպատիւ աւագ քահանայութեան։ 27 սեպտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1680 յանուն Յովհաննէս քահանայի Մարտիրոսեան ի Տփխիս, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ։ 27 սեպտեմբ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1681 յանուն Յովհաննէս քահանայի Տէր Գրիգորեան ի Տփխիս, որով շնորհէ նմա իրաւունս կրել զթաւշեայ զկխարկն «կամիլաւկա», ըստ միջնորդութեան Գերապատիւ Առաջնորդին Տփխեաց։ 27 սեպ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1683 յանուն Յովհան քահանայի Մանդակունի ի Վառնա, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ի նշան գոհունակութեան։ 27.

*
* *

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետին համարաւ 1712 յանուն Ցեղապահի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Գերապատիւ Հմայեակ եպիսկոպոսի, որով շնորհաւորէ զպաշտօնն Ցեղապահութեան, մաղթելով կարողութիւն և յաջողութիւն յամենայն գործս։ 1 հոկտեմբեր.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1713 յանուն Օգսէնտիոս քահանայի Զուրբայեան ի Կէրչ, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ խնդրանաց ժողովրդեանն։ 1 հոկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1718 յանուն Գերապատիւ Կիւրեղ եպիսկոպոսի Արապեան, որով շնորհէ նմա Պանակէ եպիսկոպոսական կրել ի կուրծս։ 1 հոկտ. —

—Ծան. զնոյն և շնորհեալ եղև Կոնդակօք առ Գերապատիւ եպիսկոպոսունս Մակար Բարխուդարեան, Անանիա Համազասպեան և Յովրէն Սահփանէ։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1726 յանուն Պօղոս վարդապետի Մալխասեան, որով նշանակէ զնա ի վանահայրութիւն վանուցն Խորվիրապու։ 3 հոկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1738 յանուն Մակար եպիսկոպոսի Բարխուդարեան, որով նշանակէ զնա կառավարիչ թեմին Շամախւոյ։ 5 հոկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1740 յանուն Սահակ վարդապետի Ամատունի, որով շնորհէ նմա լանջախաչ վարդապետական ի նշան գոհունակութեան։ 6 հոկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1761 յանուն Յովհաննէս աւագ քահանայի Գալստեան՝ որ ի գիւղն Ախալքալաք, որով օրհնէ զնա սակս կառուցման նորա եկեղեցի արդեամբ իւրով։ 7 հոկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1772 յանուն Առաջնորդի Արտպատականի Գերապատիւ Սուքիաս Արքեպիսկոպոսի Պարզեանց, որով գոհունակութեամբ սրտի հաստատէ զնորոգ հիմնեալ թեմական առեանն վիճակին և մաղթէ պսակել զայդ ձեռնարկութիւն ամենայն յաջողութեամբք։ 12 հոկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1788 յանուն Մարգար աւագ քահանայի Սուքիասեան Եյսկ քաղաքի, որով շնորհէ նմա իրաւունս կրել ականակուռ խաչ։ 13 հոկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1810 ի Սինոդն, որով պատուիրէ կարգել ի վանահայրութիւն վանուցն Երնջակու զԵղիշէ վարդապետն Ամատունի ի տեղի Ստեփան վարդապետի Իսկեանդարեան, որ փոխադրի ի միաբանակցութիւն Գեղարդայ վանուց։ 19 հոկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1820 յանուն Նահապետ վարդապետի Նահապետեան, զոր կարգէ լիազօր կառավարիչ թեմական դպրոցին Արցախու և պատուիրէ. նախ՝ ընդունել ի հոգաբարձութենէ և ի տեսչէ զամենայն հաշիւս և զգործս դպրանոցին. երկրորդ՝ կարգել յարժանահաւատ և ի բարեպաշտօն քաղաքացեաց զյանձնաժողով մի վասն առ ժամանակեայ կառավարութեան տնտեսական գործոց դպրոցին, ընդ նախագահութեամբ նորին Արժանապատուութեան և յետ յանձնելոյ զամենայն հաշիւս ելից և մտից՝ զընկալեալսն ի հոգաբարձութենէ ծանուցանել կոնսիստորիայի թեմին. երրորդ՝ առնել ընտրութիւն ուսուցչաց և կարգել զնոսա ի պաշտօն, տալով նոցա պատշաճաւոր հրահանգս կիրառութեան ծրագրոյ և այլոց կարևորաց. չորրորդ՝ ընտրել զարժանաւոր ոմն ի պաշտօն տեսչութեան և առաջի առնել ի հաստատութիւն։ 20 հոկտ.

* * *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1822 յանուն Թաղական խորհրդոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Սուլինա քաղաքի (Ռումանիա), որով օրհնէ զամենայն հայ գաղթականութիւն քաղաքին, յաղագս ջանից նոցա ի կառուցումն եկեղեցւոյ և յորդորէ ունել զսէր և զխաղաղութիւն ընդ միմեանս։ 20 հոկ.

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

19. սեպտեմբ. 1894 ամի. Սինոդը հիմնուելով Երևանի Հայոց վիճակի Կոնսիստորիայի յայտարարութեան վերայ 29 յունիսի թ. 2642. թոյլատրեց Տաթևու վիճակի Աղքենդ գիւղի ժողովրդեան խնդրանաց համաձայն նորոգել եկեղեցին ընտրուած հոգաբարձուների ձեռօք, ծախսելով եկեղեցական պատրաստի դրամը 1500 ռուբ. իսկ պակասորդը լրացնել ժողովրդեան նուիրատուութեամբ։

—

21 սեպտ. Սինոդը ի նկատի առնելով Ասարխանի Կոնսիստորիայի յայտարարութիւնը 27 յունիսի թ. 1308. որով խնդրում է Արմաւիրցի Գաբրիել քահանայ Թուէլեանցին արձակել գործակալութեան և հոգաբարձութեան նախագահական պաշտօնից իւր խնդրանաց համաձայն, թոյլատրեց արձակել յիշեալ քահանային գործակալութեան պաշտօնից, իսկ հոգաբարձութեան նախագահութեան համար դիմել Աղգիս Վեհափառ Հայրապետի բարեհաճ անօրինութեան։

—

21 սեպտ. Սինոդն ի նկատի ունենալով Բեսսարաբիայի Հայոց Կոնսիստորիայի յայտարարութիւնը 6 յուլիսի թ. 1345. թոյլատրեց Մեծ Սալայ գիւղի (Նոր Նախիջևանի վիճակ) եկեղեցու նորոգութեան վերայ գործ դնել եկեղեցական գումարից 1010 ռուբ. իսկ պակասորդը հոգալ ժողովրդի նուիրատուութեամբ։

—

21 սեպտ. Սինոդը ի նկատի առնելով Տբիլիսի Հայոց Կոնսիստորիայի յայտարարութիւնը, 13 յունիսի թ. 2588. թոյլատրեց, շինել Բեթղեհեմի եկեղեցւոյ խաչկալը, որոյ համար ծախսել հանգուցեալ Յովհաննէս Ստեփանեան Անանեանցի այդ նպատակով նուիրած 2000 ռուբլին և 1200 ռուբ. եկեղեցական դրամից ընդ ամենայն 3200 ռուբլի։

—

28 սեպտ. Ղարաբաղու Հայոց Կոնսիստորիայն յայտարարութեամբք 10 մայիսի թ. 815 և 9 օգոստ. թ. 1181, խնդրում է քահանայութիւն Մկրտիչ Տէր Մեսրովբեանցին ձեռնադրել քահանայ, Նուխուոյ գաւառի Ջլոփան և Օրարան գիւղերից վերայ. Սինոդը